ԱՐՊՀ-ՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԲՆԱԿԱՆՈՆ ՀՈՒՆՈՎ

Արցախի պետական համալսարանն ապրիլի 6-ից ամբողջ ծավալով անցել է հեռավար ուսուցման՝ ըստ գործող դասացուցակի: ԱրՊՀ ուսանողներից հետաքրքրվել ենք պարապմունքների ընթացքից:

ԱրՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Լիլիթ Մարգարյանի հավաստմամբ՝ ուսանողությունը մեծ սիրով և պատասխանատվությամբ է մասնակցում պարապմունքներին: «Առցանց ուսուցումը, իհարկե, կարող ենք համարել ձեռքբերում, որն ունի իր դրական և բացասական կողմերը: Ստեղծված իրավիճակում այն ուսումնական ծրագրից հետ չմնալու լավագույն միջոցն է»,-ասել է նա՝ ընդգծելով, որ հարցման արդյունքում առանձնացրել են ուսանողների ներկայացրած խնդիրները, որոնք, հիմնականում, համացանցի թույլ կապի հետ են կապված:

Բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Ինեսսա Առուստամյանը ողջունում է առցանց ուսուցման համակարգով դասաժամերի անցկացումը՝ համարելով կարևոր քայլ դեպի զարգացում. 21-րդ դարում նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաներից արդյունավետ օգտվել կարողանալը կարևոր է ոչ միայն երիտասարդության, այլև ավագ սերունդների համար:

«Հեռավար ուսուցման ժամանակ պահպանվում է ուսանող-դասախոս կապը, որն ավելի արդյունավետ է դարձնում պարապմունքները»: Ի. Առուստամյանը հեռավար ուսուցման բացասական կողմերից է համարում ինֆորմացիոն տեխնոլոգիաներից մեծ կախվածություն առաջացնելու խնդիրը:

«Պատմության և իրավագիտության ֆակուլտետում առցանց դասընթացներ սկսել ենք դեռևս մինչև համալսարանում այդ մասին որոշումն ընդունելը: Ընդհանուր առմամբ, դասերն անցնում են լավ, հետաքրքիր, ուսանողների բացակայությունը դասերից շատ քիչ է, որոշ կուրսերում ընդհանրապես բացականեր չեն լինում»,- ասել է պատմություն և իրավագիտության ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Աշխեն Ասրյանը և ընդգծել, որ չնայած ինտերնետ կապի ոչ այդքան լավ հասանելիությանը՝ դասերը կազմակերպվում են դասացուցակներին համապատասխան՝ համագործակցելով դեկանի, կուրսերի ավագների և համալսարանի ղեկավարության հետ՝ միաժամանակ վերահսկելով գործընթացը բոլոր կուրսերում:

Բնագիտական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Էդիտա Առստամյանը հեռավար ուսուցումը ստեղծված իրավիճակի պայմաններում արդյունավետ է համարում՝ նշելով, որ վերալիցքավորում են իրենց մտքերը և ձեռք բերում նորանոր գիտելիքներ. «Ամեն օր ավագներից տեղեկանում եմ դասապրոցեսների ընթացքի մասին: Բոլորս պարապում ենք



ըստ դասացուցակի, եթե համացանցի հետ կապված խափանումներ չեն լինում: Բացասական կողմը առաջին հերթին կապի խափանումն է դասապրոցեսներին և նրա թույլ լինելը: Մեծ սիրով ենք մասնակցում բոլոր դասերին: Մաղթում եմ բոլորիս մեծ համբերություն, առողջություն, մնանք տանը և լինենք պարտաճանաչ»:

«Հեռավար ուսուցումը ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Դրական կողմերից կարելի է առանձնացնել առցանց պարապմունքների ժամանակ ժամանակակից դիդակտիկ տեխնոլոգիաների օգտագործումը, իսկ բացասական կողմերից հարկ է նշել ուսուցանող-ուսուցանվող կենդանի շփման բացակայությունը, որը կարևոր գործոն է ուսումնական գործընթացի ժամանակ», - ասել է մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Հռիփսիմե Մկրտչյանը՝ ընդգծելով, որ ֆակուլտետի ուսանողներն ըստ դասացուցակի բարեխղճորեն մասնակցում են բոլոր առցանց պարապմունքներին և կարևորում դրա նշանակությունը ստեղծված իրավիճակում:

«Պարապմունքները անց են կացվում նույնպիսի ոգևորությամբ: Վստահ ենք, որ այս շրջանը ևս կանցնենք պատվով և հնարավորություն կունենանք նորից հաճախել համալսարան»,- նշել է տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Տիգրան Սարգսյանը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Ս.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 02 (225)
Մարտ-ապրիլ-մայիս 2020

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՀ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Մեծարգո՛ Արայիկ Վլադիմիրի,

Արցախի պետական համալսարանի ողջ կազմի, ուսանողության և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ Արցախի Հանրապետության Նախագահի ընտրվելու առթիվ:

Մեր երկրի համար Ձեր ծավալած հասարակական, քաղաքական, տնտեսական գործունեությունն ու դրա արդյունավետությունը անհերքելի փաստեր են: Բոլորս քաջ ծանոթ ենք ԱՀ վարչապետի և պետնախարարի պաշտոններում ծավալած Ձեր գործունեությանը, որը միտված է եղել երկրի զարգացմանը տարբեր ուղղություններով: Ոչ պակաս կարևոր եմ համարում նաև ԱրՊՀ խորհուրդը տարիներ շարունակ Ձեր կողմից ղեկավարելը, Արցախի մայր բուհի շրջանավարտ լինելը, որոնցով պայմանավորված՝ Դուք մշտապես ցանկացած հարցի տվել եք արդյունավետ լուծում:

Համոզված եմ, որ բազում տարիների ընթացքում

Ձեր կուտակած հարուստ փորձը, մարդկային բարձր հատկանիշներն ու մասնագիտական գիտելիքները մեծապես կնպաստեն հայրենիքի առջև ծառացած բոլոր խնդիրների լուծմանը:

Խաղաղություն մեր երկրին և հաջողություններ Ձեզ ու մեր ժողովրդին:

ԱՐՊ ՌԵԿՏՈՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԱՀ ԿԳՄ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հարգարժա՛ն տիկին Դարախանյան

Արցախի պետական համալսարանի ողջ անձնակազմի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարար նշանակվելու կապակցությամբ:

Կրթության, գիտության և մշակույթի համակարգը մեր երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից է: Այն արդյունավետ կառավարելու, ժամանակակից պահանջներին համահունչ զարգացում ապահովելու համար կարևոր է ոլորտին քաջատեղյակ լինելն ու անցած ճանապարհը:

Ձեր անցած ճանապարհը, կրթության և գիտության ոլորտում ունեցած ձեռքբերումները, բազմամյա փորձը և մարդկային որակները լիովին թույլ են տալիս ասելու, որ նախարարությունը վստահելի ձեռքերում է:

Որպես ԱրՊՀ ռեկտոր՝ հպարտ եմ, որ Դուք, լինելով Արցախի մայր բուհի շրջանավարտը, լավագույնս եք դրսևորել Ձեզ Ձեր գործունեության բոլոր ուղղություններով՝ արժանվույնս վաստակելով ուսանողների և գործընկերների սերն ու հարգանքը:

Հաջողություն եմ մաղթում Ձեր պատասխանատու և բարդ առաքելությանը՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով համակարգում առկա մարտահրավերները համատեղ ուժերով հաղթահարելու գործում՝ ի շահ մեր հայրենիքի բարգավաճման:

ԿԱՅԱՑԵԼ Է ԱՐՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ. ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մարտի 23-ին կայացել է ԱրՊՀ գիտխորհրդի նիստ, որտեղ քննարկվել է ԱրՊՀ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նոր պայմաններ սահմանելու մասին հարցը: Գիտխորհուրդը որոշել է.



Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով նոր կորոնավիրուսի վարակի ներթափանցման և տարածման դեմ պայքարի միջոցառումները շարունակելու նպատակով ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացը դադարեցնելու մասին ԱՀ կառավարության 2020թ. մարտի 19-ի N175 որոշումն ու կրթության, գիտության և սպորտի նախարարի 2020թ. մարտի 19-ի N21-Ա հրամանը՝ սահմանել Արցախի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նոր պայմաններ.

1.2020թ. մարտի 23-ից անցնել ուսումնառության առցանց եղանակի՝ ըստ գործող դասացուցակի՝ նախապես բոլոր ուսանողներին տրամադրելով դասընթացների առարկայական նկարագրերը, հարցաշարերի, դասախոսությունների, գործնական և ինքնուրույն աշխատանքների թեմաների, գրականության ցանկի էլեկտրոնային տարբերակները: Նշված գործընթացի իրականացման պատասխանատվությունը դնել համապատասխան ամբիոնների վարիչների վրա:

2.2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնառության շրջանը երկարաձգել մինչև հունիսի 15-ը:

3.Առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի ու մագիստրատուրայի առաջին կուրսի ավանդական, առանց եզրափակիչ գնահատման, եզրափակիչ գնահատումով դասընթացների ստուգումներն ու առաջին լուծարքը անցկացնել հունիսի 15-30-ը, իսկ առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի ու մագիստրատուրայի ավարտական խմբերի ստուգումներն ու լուծարքը՝ մայիսի 4-11-ը՝ գնահատման 16 միավորանոց սանդղակով՝ չեղարկելով ընթացիկ բոլոր ստուգումները:

4.Առկա ուսուցման համակարգի կուրսային աշխատանքների հանձնումը, առկա և հեռակա ուսուցման համակարգերի ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը կազմակերպել մայիսի 14-20-ը, ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը՝ մայիսի 25-29-ը:

5.Նախատեսված և ժամանակավոր ընդհատված փորձուսուցումները կազմակերպել պարապմունքները վերսկսվելուց հետո:

6.Գործընթացի վերահսկման համար ստեղծել հանձնաժողովներ.

ա) Բանասիրական, պատմության և իրավագիտության, մանկավարժության և սպորտի ֆակուլտետների գծով.

Նախագահ-Յարամիշյան Վ. (ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր)

Անդամներ - Մարգարյան Լ.(բանասիրական ֆակուլտետի դեկան)

Խաչատրյան Ա. (պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան)

Այդինյան Շ. (մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան)

Խաչատրյան Ի. (ուս. գործ. կազմ. բաժնի պետ)

Ղահրամանյան Է. (տեղեկատ. տեխ. և համակ. սպասարկման բաժնի պետ)

բ) Բնագիտական և տնտեսագիտության ֆակուլտետների գծով.

Նախագահ-Սահակյան Գ. (ուս. աշխ. գծով պրոռեկտոր)

Անդամներ-Միրզոյան Վ. (բնագիտական ֆակուլտետի դեկան)

Մանգասարյան Ռ. (տնտեսագիտության ֆակուլտետի դեկան)

Գասպարյան Գ. (ուս. գործ. վերահսկ. բաժնի պետ)

Մնացականյան Ա. (կիր. մաթ. և ինֆորմ. ամբիոնի դասախոս):

ԱՐՊՀ-Ն ԱՆՑԵԼ Է ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Ապրիլի 6-ից Արցախի պետական համալսարանն ամբողջ ծավալով անցել է հեռավար ուսուցման՝ ըստ գործող դասացուցակի: Յուրաքանչյուր օր, դասացուցակին համապատասխան, դասախոսները կազմակերպում են առցանց դասախոսություններ: Նախապես բոլոր ուսանողներին տրամադրվել են դասընթացների առարկայական նկարագրերը, հարցաշարերի, դասախոսությունների, գործնական և ինքնուրույն աշխատանքների թեմաների, գրականության ցանկի էլեկտրոնային տարբերակները: Գործընթացի վերահսկման նպատակով ստեղծվել են հանձնաժողովներ՝ հումանիտար և բնագիտական ուղղություններով:

«Առցանց դասախոսությունների մեկնարկը տրված է և, կարելի է ասել, բավականին հաջող, խափանումներ գրեթե չեն եղել»,-ասել է ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը մայիսի 19-ին Արցախի պետական համալսարանի ֆեյսբուքյան էջի ուղիղ եթերում խոսել է երկրում հայտարարված արտակարգ իրավիճակի պայմաններում ուսումնական գործընթացի կազմակերպման մասին և պատասխանել ուսանողներին հետաքրքրող հարցերին:

Նա հատկապես ընդգծել է, որ ստեղծված պայմաններում ԱրՊՀ-ում ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կհասցվի ավարտին: Այդ նպատակին են միտված եղել բազմաթիվ ձեռնարկումները, նոր որոշումների կայացումը, որի արդյունքում ապրիլի 6-ից բուհը անցել է հեռավար ուսուցման, և գործող դասացուցակներին համապատասխան իրականացվում են պարապմունքները:

Ռեկտորը առցանց ասուլիսին անդրադարձել է մի շարք հարցերի, որոնք այս ժամանակահատվածում ամենաշատն են հետաքրքրում ուսանողներին:

Այսպես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեռավար ուսուցման ընթացքում լինում են համացանցի և էլեկտրաէներգիայի խափանումներ, բոլոր ուսանողներին հաճախումների համար կնշանակվի առավելագույն 2 միավոր, անկախ նրանից, թե տվյալ ուսանողը դասընթացին ամբողջությամբ է մասնակցել թե ոչ: Բոլոր ստուգումները անցկացնելիս յուրաքանչյուր դասախոս ինքն է ընտրելու քննության անցկացման ձևը:

Ուսանողների կողմից բարձրացված մեկ այլ հարց վերաբերում էր կուրսային և ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությանը: Ա. Սարգսյանը լիահույս է, որ հունիսի 11-ից հետո Արցախում արտակարգ իրավիճակը կվերանա, և ստուգումները կանցկացվեն լսարանային պայմաններում, չի բացառվում նաև հեռավար տարբերակը:

Հաջորդ հարցը վերաբերում էր հասարակական ակտիվության գնահատմանը: Հաշվի առնելով, որ երկրորդ կիսամյակում հասարակական ակտիվություն դրսևորելու հնարավորություն ուսանողները չեն ունեցել, Ա. Սարգսյանը նշել է, որ հաջորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար հասարակական ակտիվությունը հաշվի չի առնվի:

Ուսանողների կողմից բարձրացված հարցերից էր նաև ուսանողական հանրակացարանի վարձերի փոխհատուցումը, որը կատարվում է նախօրոք: Ռեկտորը հայտնել է, որ հանրակացարանում բնակվում են ոչ միայն ԱրՊՀ, այլև հանրապետության այլ ուսումնական հաստատություններից ուսանողներ:

«Բոլոր այն ուսանողները ովքեր փաստացի այս ամիսների ընթացքում բնակվել են հանրակացարանում, նրանք կվճարեն բնակվարձի համար: Իսկ այն ուսանողները, ովքեր չեն բնակվել, այդ գումարները կվերադարձվեն նրանց կամ էլ, իրենց իսկ համաձայնությամբ, կփոխանցվեն հաջորդ ուսումնական տարվա վարձավճարային ֆոնդին: Այդ ուղղությամբ տարվում են որոշակի աշխատանքներ»,- տեղեկացրել է Ա. Սարգսյանը:

Նա նշել է, որ մայր բուհում ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կհասցվի ավարտին և նույն կերպ աշխատանքներ կտարվեն հաջորդ ուսումնական տարում ուսումնական գործընթացը մեկնարկելու համար: